ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

Հրազդանի համայնքապետարանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների կարիքների համար <<Սննդամթերքի>> ձեռքբերման <<ԿՄՀՔ-ԳՀԱՊՁԲ-19/05>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

13.03.2019թ.՝

ժամը 10:00

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

---

1. Ընդունել ի գիտություն՝

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի <<Նոր Ֆուդ>> , <<Պիրամիդա Կվինտ>>, <<Հանիավան Սփրինգս>> , <<Հելթի Ֆուդ>> , <<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց պարտավորություններ:

1.2 <<ԷԿՈ ՖՐՈՒՏ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 42 000 /քառասուներկու հազար/ ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով <<Գնումների մասին >> օրենքի 6-րդ հոդվածի 1 կետի 2-րդ ենթակետը, <<ԿՄՀՔ-ԳՀԱՊՁԲ-19/05>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժեց <<ԷԿՈ ՖՐՈՒՏ>> ՍՊԸ-ի հայտը:

1.3 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցում էր ուղարկվել որակավորման չափանիշները

հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերի պահանջի վերաբերյալ: Սահմանված ժամկետում և սահմանված պահանջներին համապատասխան «Պիրամիդա Կվինտ», «Հելթի Ֆուդ», «Ցիկլոիդ», «ՆՈՐ ՖՈՒԴ» Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների կողմից ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

1.4 «Հանիավան Սփրինգս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող ներկայացրած փաստաթղթերն ամբողջական չեն , ուստի վերջինիս կծանուցվի 1 օրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունը, չշտկելու դեպքում հայտը կմերժվի:

2. Ընթացակարգի հայտերը գնահատելու և պայմանագիր կնքելու որոշման մասին

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.1 և 1.3 կետերը, հանձնաժողովը որոշեց հաստատել առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների գնահատման արդյունքները, ինչպես նաև «ԿՄՀՔ -ԳՀԱՊՁԲ-19/05» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել «Պիրամիդա Կվինտ», «Հելթի Ֆուդ», «Ցիկլոիդ», « ՆՈՐ ՖՈՒԴ » ՍՊԸ -ներին՝ վերջիններիս առաջարկելով «Սննդամթերք»-ի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ:

Հանձնաժողովի նախագահ՝ ----------Հ.Հակոբյան

Անդամներ՝ ----------Ա.Սուքիասյան

----------Հ.Մակոյան

----------Ա.Մելքոնյան

----------Ա. Սահակյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ ----------Ք.Բաղդասարյան